

Հայոց ցեղասպանության ճանաչման իրավական հիմքերը

Տիկնայք և պարոնայք, հարգարժան հյուրեր,

Խորին երախտագիտությունս եմ հայտնում կազմակերպիչներին՝ մեր մտքերը կիսելու և կարծիքները փոխանակելու հնարավորությունն ընձեռելու համար, այն հույսով, որ մենք, **որպես ազգ, կարող ենք ծրագիր մշակել մեր աշխարհաքաղաքական միջավայրի վրա մեծապես ազդելու նպատակով և այդպիսով կառուցել ավելի բարգավաճ ապագա:**

Իմ աշխատության վերնագիրն է՝

«Իրավական և քաղաքական գործընթացները՝ «ցեղասպանության ակտի», որն իրականացվել է Օսմանյան Թուրքիայի կողմից՝ հայ քաղաքացիների հանդեպ 1915-ին, Թուրքիայի ճանաչման գործում»:

Իմ ներկայացված թեմայի մեջ ես օգտագործում եմ «ցեղասպանության ակտ» տերմինը՝ ի տարբերություն ՄԱԿ-ի ցեղասպանության կանխարգելման և դատապարտման մասին կոնվենցիայում տեղ գտած «ցեղասպանություն կոնվենցիայ» իրավական տերմինի:

Անցած 35 տարիների ընթացքում ես սերտորեն աշխատել եմ այս ուղղությամբ գիտնականների հետ Ջորջյան Ինստիտուտում: Ես պարզապես ներկայացնում եմ իմ դիտողություններն ինչպես հայ ազգի զավակ, ով մտածել է այդ մասին, ինչպես ձեզնից շատերը:

Այժմ եկե՛ք քննարկենք, արդյո՞ք ՄԱԿ-ի ցեղասպանության կոնվենցիան կարող է օգտագործվել որպես գործիք՝ առաջարկված վերականգնման և հատուցման պահանջներին հասնելու համար.

«Ցեղասպանություն» բառը որպես իրավական տերմին, ստեղծված Ռաֆայել Լեմկինի կողմից՝ ունի մի յուրահատուկ իրավական նշանակություն, ուղղված մարդկանց որոշակի խմբի լրիվ կամ մասնակի ֆիզիկական ոչնչացմանը՝ որպես աղգային, էթնիկ, ռասայական կամ կրոնական խումբ: Որպես այդպիսին, այն ներառում է հետևյալը.

1. խմբի անդամների սպանությունը;
2. խմբի անդամներին լուրջ մարմնական կամ մտավոր վնասներ պատճառելը;
3. խմբի համար կյանքի այնպիսի պայմանների միտումնավոր ստեղծումը, որոնք ուղղված են նրա ֆիզիզական ոչնչացմանը;
4. այդ խմբի մեջ ծննդաբերությունը կանխելուն միտված միջոցների իրականացումը;
5. բռնի ուժով երեխաների տեղափոխումը այլ խմբի մեջ:

Վերը նշված հանցագործությունները հստակ նկարագրում են այն, ինչ օսմանյան թուրքերն իրականացրել են հայերի հանդեպ 1915 թվականին:

Ակնհայտ է, որ այս հանցագործությունները որպես «ցեղասպանության ակտ» կոչելն ու ճանաչում որոնելը մեկ բան է, սակայն դրանց դիտարկումը որպես ցեղասպանության հանցագործություն՝ ըստ կոնվենցիայի, ինչպես նաև հատուցման պահանջը՝ մեկ այլ բան: Վերջին նշվածը ունի լուրջ քաղաքական ռիսկեր և մարտահրավերներ:

Բազմաթիվ մարտահրավերներից, որոնք թույլ չեն տալիս ՄԱԿի ցեղասպանության կոնվենցիայի օգտագործումը, միայն երկուսը՝ ապացուցելու, թե ինչու Կոնվենցիան չի կարող օգտագործվել:

Ա). Առաջին հերթին, «պետություն», որպես ցեղասպանություն կատարող, բացակայում է կոնվենցիայից: Այն խոսում էր ցեղասպանություն իրականացնող անհատների մասին: Արդյո՞ք դա նշանակում է, որ նման հանցագործություն կատարած պետություն և կամ ոճրագործների հետ անուղղակի համաձայնության եկած պետություններն անձեռնմխելի են:

Բ). Երկրորդ հերթին, հիմնական խնդիրն է՝ ցեղասպանության կոնվենցիայի հետադարձ կիրառումը Հայկական հարցի վերաբերյալ: Կոնվենցիան ընդունվել է 1948 թվականին ՄԱԿ-ի կողմից և ուժի մեջ է մտել 1951-ին:

Հարցը նրանում է, թե ինչ՞ այլընտրանքային մոտեցում կարող է դիտարկվել տարբեր պահանջների դեպքում:

Այժմ եկե՛ք հիշենք, որ 1945 թվականին, Նյուրնբերգյան դատավարությունը դատապարտեց 24 նացիստական առաջնորդների: «Ցեղասպանություն» տերմինը մի քանի անգամ օգտագործվել էր դատավարության ընթացքում, բայց այն չի գործածվել դատավճիռներում: Սակայն, 4 կետերից մեկը, ըստ որի նացիստական առաջնորդները դատապարտվեցին, դա «մարդկության դեմ ոճրի հանցագործություն» ն էր: - crime against humanity.

Այժմ հարց է ծագում, թե արդիո՞ք հնարաւոր է գիրարել մարդկության դեմ ոճրի հանցագործությունը, Հայոց ցեղասպանության վերաբերյալ, իրավական գործընթացներում:

Համաձայն Հռոմի կանոնադրությանը՝ մարդկության դեմ ոճրի հանցագործությունները ներառում են սպանությունը, բնաջնջումը, արտաքսումը կամ բնակչության բռնի ուժով տարհանումը, որևէ խմբի հետապնդումը՝ քաղաքական, ռասիստական, ազգային, էթնիկ, մշակութային, կրոնական, սեռական պատկանելիության կամ այլ նպատակներով:

Որոշակի անհամաձայնություններ կային այն հարցի շուրջ, քանի որ 1945 թվականի օգոստոս ամսին միջազգային ռազմական տրիբունալի կանոնադրության մեջ՝ մարդկության դեմ ոճոճի հանցագործության նշանակությունը՝ որոշված էր հետադարձ կերպով կիրառել նացիստների կողմից իրագործած ոճրագործությունների հանդեպ՝ նույնիսկ մինչ պատերազմի սկիզբը:

Ոստի ողջամիտ կլիներ Հայկական հարցի վերաբերյալ նույնպես հետադարձ կերպով կիրառել՝ մարդկության դեմ ոճոճի հանցագործությունը՝ տանելով այն ևս երեք տասնամյակ հետ:

Այդ դեպքում առավել կարևոր է դառնում այն փաստը, որ «մարդկության դեմ ոճոճի հանցագործություն» արտահայտությունը նույնպես պատմականորեն ստեղծված է 1915 թվականի մայիսի 24-ին դաշնակից պետությունների՝ Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի՝ հայերի վերաբերյալ համատեղ հայտարարությամբ:

Հոչակագրում ասվում է. –

«Մոտ մեկ ամիս է, ինչ Հայաստանի քուրդ և թուրք բնակչությունը, կոտորում է հայերին Օսմանյան կայսրության իշխանությունների համաձայնությամբ և հաճախ նաև աջակցությամբ:

Նման կոտորածները տեղի են ունեցել ապրիլի կեսերին Էրզրումում, Դյուզլեում, Էդիրնեում, Այդրնում, Բիթլիսում, Մուշում, Մասունում, Ջեյթունում և ողջ Կիլիկիայում: Վանի շրջակայքում հարյուր գյուղերի բնակիչներ սպանվել են: Այդ քաղաքի հայկական թաղամասը շրջափակվել է քրդերի կողմից:

Միաժամանակ Կոստանդնուպոլիսում Օսմանյան կառավարությունը վատեր վերաբերվում անմեղ հայերի հանդեպ:

Այնուհետև շարունակվում է.

«Հաշվի առնելով մարդկության և քաղաքակրթության դեմ կատարած Թուրքիայի այդ նոր ոճոճի հանցագործությունները, դաշնակից պետությունները հրապարակավ հայտարարում են թուրքական կառավարությանը, որ նրանք անձամբ պատասխանատվության կենթարկեն այդ բոլոր ոճիորների համար Օսմանյան կառավարության բոլոր անդամներին, ինչպես նաև նրա գործակիցներին, որոնք մասնակից են եղել այդ կոտորածների»:

Այսպիսով, արդյո՞ք կարելի է համարել, որ 1915 թվականի մայիսի 24-ի հոչակագիրը կարող է հանդես գալ որպես հզոր գործիք՝ առաջարկված հատուցման նպատակին հասնելու համար: Եվ արդիո՞ք Թուրքիայի համար ավելի ճիշտ կլինի ընդունել

հրչակագրումը որպես պատմական և իրավական փաստ, քան թե ցեղասպանության կոնվենցիաի օրինական կիրառումը:

Մի բան, որ կարող ենք հստակ եզրակացնել 1915 թվականի հռչակագրից, դա այն է, որ Մեծ Բրիտանիան պետք է համոզվի փոխելու իր ժխտողականության քաղաքականությունը Հայոց ցեղասպանության ակտի վերաբերյալ, հաշվի առնելով, որ Մեծ Բրիտանիան ինքնին 1915 թվականի հռչակագրի ստորագրող կողմերից մեկն էր:

Գիտակցելով այս ամենը, ես կարծում եմ, որ Հայաստանի կառուարութիւնը եւ Նախագահը պիտի որոշում կայացնի, թե արդյոք Հայաստանը պետք է հատուցում պահանջի, նկատի առնելով հետեւյալ կետերը.

ա). Երկրների մեծ մասը կաջակցի նման պահանջքի, եթե այդ գործը կնպաստի իրենց ազգային շահերի:

բ). 1920 թվականին Սևրի պայմանագրով տարածքներ են տրվել Հայաստանին որպես փոխհատուցում հայերի նկատմամբ կատարված հանցագործությունների համար, սակայն շուտով, 1923 թվականի հուլիսին փոխարինվել է Լոզանի պայմանագրով: Այս երկու պայմանագրերն էլ ունեն պատմական իրավական ուժ:

գ). Թուրքիան և նրա աջակիցները, ինչպիսիք են Մեծ Բրիտանիան, ԱՄՆ-ն և Իսրայելը, օգտագործում են «անվտանգությունը»՝ օսմանյան թուրքերի կողմից իրականացված ցեղասպանության ակտը չճանաչելու նպատակով: Ոչ մի ԱՄՆ-ի նախագահ, այդ թվում Օրաման, չի արտասանել «ցեղասպանություն» բառն իր հայտարարություններում, բացի նախագահ Ռեյգանից: Նրանք բոլորը մատնանշում են Միջին Արևելքում ԱՄՆ-ի անվտանգությանը վերաբերող շահերը, որպես հիմնական պատճառ:

դ). “Realpolitik” խնդիրները **նույնպես** պետք է հաշվի առնվեն – Թուրքիաի զինվորական և տնտեսական հնարավորությունները:

- Թուրքիան ունի ամենախոշոր ռազմական զինված կազմավորում տարածաշրջանում և տնտեսություն, որն առնվազն 100 անգամ մեծ է, քան Հայաստանինը;
- թույլ հարաբերություններ նեո-գաղութային Ռուսաստանի և Հայաստանի միջև, ինչպես նաև Ռուսաստանի geopolitik նկատառումները հարևան երկրների վերաբերյալ;
- Ռուսական զենքի վաճառքը՝ միևնույն ժամանակ Ադրբեջանին և Հայաստանին, անտեսելով այն իրականությունը, որ Ռուսաստանը Հայաստանի ռազմավարական դաշնակիցն է և լավ իմանալով, որ Ադրբեջան օգտագործել է եւ շարունակում է օգտագործել այդ զենքը Հայաստանի դեմ;

- Ունենալով ռուսական բանակը՝ Հայաստան-Թուրքիա սահմանի վրա կարող է բերել նրան, որ որևէ հատուցման պահանջից կարող է բխել ճգնաժամի հետ կապված պոտենցիալ վտանգ:

ե). ոչ մի իրավական հիմքեր չկան հողերի հետ ստանալու պահանջի վերաբերյալ, քանի որ Հայաստանն ու Թուրքիան ՄԱԿ-ի անդամ երկրներ են և որպես այդպիսին ճանաչված են իրենց միջազգային սահմաններով:

Այս դիտարկումները ամենևին էլ չեն նշանակում, որ մենք, որպես ազգ, երբևիցե կդադարենք Թուրքիայից ճանաչում պահանջել թե այն, ինչ Օսմանյան Թուրքիան, որպես նախորդող պետություն, իրականացրեց 1915-ին, դա ցեղասպանության ակտ էր:

Ինչևէ, մենք պետք է իրազեկված լինենք վերը նշված խնդիրների և ռիսկերի վերաբերյալ՝ միջազգային դատարանների միջոցով արդարությանը հասնելու գործում:

Վերջին մի քանի տասնամյակների ընթացքում Թուրքիայի հանրապետության ժխտողականության հետ պայքարելով, մեզ հաջողվեց միասնականորեն պնդել և հաստատել՝ գիտության միջոցով, որպես մեր աշխատանքի առաջին փուլ, Օսմանյան Թուրքիայի կողմից հայերի, որպես ազգային, էթնիկ և կրոնական խմբի մասնակի կամ լրիվ ոչնչացման մտադրության անհերքելիության փաստի մասին: Սա պարզապես ցեղասպանության ակտ է:

Այժմ մեր միասնական աշխատանքի երկրորդ փուլի, կամ առնվազն Ջորջան Ինստիտուտի աշխատանքով, և կրկին գիտության օգնությամբ պետք է հասկանանք՝ մեզ, որպես ազգի վրա անդրադարձած ցեղասպանության ակտի ազդեցությունը: Բացի մարդկային և **տարածքային ու նյութական** կորուստներից, մենք առնչություն չենք ունեցել իրական ազդեցության հետ, որ ցեղասպանությունը թողել է մեր ժողովրդի վրա՝ սոցիալապես, տնտեսապես, քաղաքականապես, մշակութային և, հատկապես, հոգեբանորեն առումով: Ուսումնասիրության և գիտական աշխատանքի **կարիքն ավելի ազդեցիկ է, քանի մենք շարունակում ենք հասկանալ և կշռադատել ցեղասպանության բազմաձևավալ ազդեցությունը:** Էմոցիոնալ առումով հազեցած, սերնդեսերունդ փոխանցվող հոգեցնցումը, որը մեզ է անցել մեր ծնողներից՝ ցեղասպանություն վերապրածներից:

Որպես ամփոփում. հատուցում ստանալու իրավական պահանջներին հասնելու նպատակով հաջողության հասնելու հավանականությունը կարող է շատ ավելի բարձր ցուցանիշ ունենալ, եթե այն իրականացվում է մարդկության դեմ հանցագործությունների իրավական շրջանակներում:

Վերջիվերջո, հարկավոր է իրականացնել լուրջ ինքնավերլուծություն այն բանի շուրջ, թե ինչ շահեր կունենա Հայաստանը հետևելով նման նախաձեռնություններին՝ Էմոցիոնալ և հոգեբանական շահերից այն կողմ: Ամեն դեպքում պետք է կատարվի լուրջ աշխատանք,

որպեսզի քաղաքական դերակատանների միջև երկխոսությունը հիմնված լինի ճշմարտության վրա, որն էլ իր հերթին կհիմնվի անհերքելի տվյալների վրա: Մեր ուշադրությունը պետք է միշտ սևեռված լինի գեոքաղաքական բնագավառում Հայաստանի դիրքն ամրապնդելու վրա:

Այո՛, հարկավոր է, որ շարունակենք հետևել ճշմարտությանն ու արդարությանը ոչ միայն հպանցիկ հայացք նետելով վերջերս տեղի ունեցած պատմության հայելու մեջ, այլ նաև առաջ նայելով մեր հետագա նպատակակետին՝ որպես ազգ:

Միգուցե սա ոչ արդիական և խրթին հասկացություն է, սակայն հարկավոր է հիշել, որ գոյություն ունի մեծ բաց՝ անվտանգությունն իր բոլոր առումներով ներկայացնելու մեջ: Այսօր էլ Թուրքիան շարունակում է գործել որպես իմպերիալիստական ուժ, միտում ունենալով մեծացնել իր սահմանները Իրաքում, Սիրիայում և այլուր: Մի կողմից՝ Հայաստանն ունի անվտանգությանը և գոյատևելու վերաբերյալ լուրջ խնդիրներ ու մտահոգություններ, հաշվի առնելով դեմոգրաֆիկ, ռազմական, տնտեսական քաղաքական և հատկապես գեոքաղաքական նկատառումներն ի տարբերություն մեր հակառակորդների: Ահա թե ինչու նրանք քարոզչության առաջատարն են, չնայած, որ մենք ենք հաղթանակ տարել ակադեմիական և գիտական մրցույթում:

Գրեգ Սարգսյան

Զորյան ինստիտուտի նախագահ